



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2784

332.7

Q-11

1929

2010

FEB 2001

332-7

Ա - 11

Ա. Ս. Ֆ. Խ. Ն.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՎԱՐԿԱՅԻՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՎԱՆ ԱԶԳԱ-
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՍԻ-
ՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(7/II յեվ 11/VII—1929 թ.)

ՅԵՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԱՆԴՐՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ, ԱՆԴՐԳՅՈՒՂԲԱՆԿԻ ՅԵՎ
ԱՆԴՐԳՅՈՒՂՄԻՈՒԹՅԱՆ

ԺԱՄԿԵՏԱՆՑՆԵՐԸ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԶԳԱԲՆԱ-
ԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԹԻՖԼԻՍ
1929

7387-42

342.51(47.92)

47-11

470

ԱՆԴՐԺՈՂԿՈՄԵՐՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄ

11-ն հունիսի 1929 թվի № 41/14

14. ԼՍԵՑԻՆ: Գյուղատնտեսական վարկային սիստեմի շուրջ բնակչության միջոցների մոբիլիզացիայի կամպանիայի արդյունքների և հետագա ձեռնարկների մասին:

(Ձեկուցում ընկ. Չխենկելի. գործ № 2103):

14. ՎՈՐՈՇՈՒՄ: 1. Գյուղական բնակչության միջոցների մոբիլիզացիայի կամպանիայի արդյունքները գտնել անբավարար:

2. Արձանագրել վոր գյուղական բնակչության միջոցների մոբիլիզացիայի վերաբերյալ Անդրժողովոմխորհի 1929 թ. 7 փետրվարի վորոշումը չի կիրառված կյանքում:

3. Գյուղական բնակչության միջոցների մոբիլիզացիայի և ժամկետանց փոխառությունների գանձման կամպանիայի շարունակել մինչև 1929 թվի դեկտեմբերի 1-ը, առանձնահատուկ կերպով ուժեղացնելով այսպիսին ոգոստոսի 1-ից հետո, այսինքն գյուղական տնտեսության մթերքների ռեալիզացիայի ժամանակաշրջանում, վճռականորեն և անվերապահորեն կիրառելով կյանքում Անդրժողովոմխորհի 1929 թվի 7 փետրվարի վորոշումը և առաջնորդվելով Անդրգյուղբանկի, Անդրֆինոգլոմատի և Գյուղատնտեսական կոոպերացիայի միության նույն թվի միացյալ հրահանգի տրամադրություններով, այն հաշվով, վոր մինչև հոկտեմբերի 1-ը ժամկետանց փոխառություններից, փայավճարներից ու մինչդամկետային գանձումներից գանձված լինի 2,500 հազար ռուբլի, վորից վրաստանում 1,025 հազար, Աղբրեյշանում 1,025 հազար և Հայաստանում 450 հազար ռուբլի:

4. Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր պարտքերի գանձման վերաբերյալ չքավորության տրվող արտոնություններից ոգտվել են չքավոր շերտերից դուրս գտնվող անհատներ, հանձնարարել Անդր. Ս. Խ. Ֆ. Հ. մեջ գտնվող հանրապետական ժողովոմխորհներին միջոցներ ձեռք առնել այն իմաստով, վոր պարտքերի գանձման արտոնություններ տրվեն միայն կոլտնտեսությունների և միասնակից ազատված անհատ տնտեսություններին:

5. Առաջարկել Ա. Ս. Խ. Ֆ. Հ. մեջ մտնող հանրապետական ժողովոմխորհներին:—

ա. վճռական միջոցներ ձեռք առնել դատական պատասխանատվության յենթարկելու համար վարկ ընկերությունների ղեկավարների, ժամկետանց

Պատ. № 1480.

Դեկտեմբեր 1169.

Տիրաժ 400.

Տպարան հրատ. «Զարիա Վոստոկա»-ի Ռուսթավելու փող. № 36.

7114-57



ների գանձման և միջոցների մոբիլիզացիայի կամպանիայի վերաբերյալ վորոշումները լրիվ կյանքում չը կիրառելու կամ անտես առնելու համար, ինչպես ընդհանրապես, նույնպես և առանձին կետերի վերաբերյալ:

բ. Հանձնարարել հանրապետական գյուղատնտեսական բանկերի վարչութիւններին պարտավորեցնելու վարկ. ընկերութիւնների վարչութիւններին, վոչ ուշ հուլիսի 31-ից հասարակական վայրերում (վարկ. ընկերութիւնների գրասենյակներում, գյուղխորհուրդներում) խրճիթ-ընթերցարաններում և այլն) կպցնելու անպարտաճանաչ փոխառուների ցուցակները, առանց բացառութեան վարկ. ընկերութեան անձնական կազմից և ծառայողներից և անկախ նրանց գրաված պաշտոններից:

գ. Սույն կամպանիայի ընթացքում հավաքված միջոցները կենտրոնացնել գյուղատնտեսական բանկում և նրանց մի մասը ոգտագործել աշխատանքների կամպանիայի վարկավորման համար:

6. Հանձնարարել Անդրգյուղբանկին, Անդրֆինոզկոմատի հետ միասին պարզելու վարկային սխտեմում չ'մտնող և հանրապետական գյուղատնտեսական բանկերին պարտք ունեցող հաստատութիւնների ու կազմակերպութիւնների պարտքերի ճիշտ գումարը և վոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը ղեկուցել Անդրֆինոզկոմատին:

7. Հանձնարարել Անդրգյուղբանկին շտապ կերպով ուղարկել համապատասխան ցուցմունքներ ու միջոցներ ձեռք առնել սոյն վորոշման կիրառումը ստուգելու համար:

Նախագահ Շ. ԵԼԻԱՎԱ.

Գործերի վարիչ Ն. ԲԱՆՏԱՋԵ.

Մտից № 63/4613

20 VII 1929 թ.

ՎՈՐՈՇՈՒՄ ԱՍՖԻԶ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Վարկային դիսցիպլինան բարձրացնելու և գյուղատնտեսական վարկային սխտեմում գյուղացի ազգաբնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու մասին:

ԱՍՖԻԶ Ժողովրդական կոմիսարներին խորհուրդը վորոշում և.

I. Նշել, վոր գյուղատնտեսական վարկի սխտեմի վարկային շրջանառութեան մեջ մինչև այսօր վոչ միայն չեն մասնակցում ազգաբնակչության միջոցները, վորոնք հավաքված են փայերի ու հատուկ մոծումների և ավանդների ձևով, այլև նույնիսկ լրիվին չեն մասնակցում պետութեան հատկացված միջոցները, ազգաբնակչության վճարելու ժամկետները չափից ավելի անցած լինելու հետևանքով, առանձնապես վերջին շրջանում (1.894,000ռ. առ. 1-ն հուլիսի 1928 թ. մինչև 4 միլ. ո. առ 1-ն հունվարի 1929 թ. կամ 110 տոկ. նախնական ցանցում, և 1.803.000 ուրբուց մինչ 3.053.000 ո., կամ 69 տոկ. գյուղատնտեսական բանկերում):

II. Ընդունել, վոր գյուղատնտեսական վարկային սխտեմի այս դրութեան շարունակութեանը միանգամայն անթույլատրելի յե և սպառնում և խափանել պետութեան ձեռք առած միջոցները գյուղատնտեսութեան տապարեզում:

III. Առաջարկել Անդր. Գյուղ-Բանկին, հանրապետական գյուղ-բանկերին, գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնների և հանրապետութիւնների ֆինոզկոմատների հետ միասին, յերկու ամսվա ընթացքում կազմակերպել և անցկացնել լայն կամպանիա՝ մոբիլիզացիայի յենթարկելու ազգաբնակչության միջոցները գյուղատնտեսական վարկի սխտեմում, մասնավորապես լիկվիդացիայի յենթարկելու ժամկետը լրացրած փոխառութիւնները և վնասները, ավելացնելու փայական և հատուկ կապիտալները և նախնական ցանցի ավանդները, հիմք ընդունելով հետևյալը.

Ա. Վարկային դիսցիպլինան բարձրացնելու համար.

1. Գյուղատնտեսական վայրերում անցկացնել բացատրական կամպանիա գյուղական լայն ակտիվի մասնակցութեամբ, վարկի ժամկետի լրացումները (просрочки) հարվածային կարգով լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտութեան հարցի մասին:

2. Հայտնաբերել այն դեպքերը, յերբ գյուղատնտեսական վարկային ընկերութիւնները փոխառութիւն են արել՝ կրճատելով գյուղատնտեսա-

կան վարկի սխտեմի բարձրագույն ողակների կողմից սահմանված վարկավորման ժամկետները և նման դեպքերում փոխառությունները ձևափոխելը ստ փոխառությունների ժամկետների:

3. Հայտնաբերել՝ գյուղական ակտիվի մասնակցությունը՝ այն անձանց, վորոնք պատկանում են չարամիտ կերպով չվճարողների թվին և շտապ կարգով գանձել պարտքը պարտապանի գոյքից:

4. Առանց բացառության ժամանակն անցած բոլոր փոխառությունների համար շտապ կերպով ստանալ դատարանական հրամաններ և կատարողական թերթեր և ներկայացնել գանձման համար:

5. Կամպանիայի ժամանակ ԱՍՖՆՀ կազմի մեջ մտնող բոլոր հանրապետություններում (ժամանակն անցած փոխառությունների կողմից առանձնապես անբարենպաստ շրջաններում) առաջին հերթին պահել հատուկ դատական կատարածություններ գյուղատնտեսական վարկի սխտեմի հաշվին:

6. Գյուղատնտեսական վարկի բանկային ողակներում ձեռք առնել վարկային ֆինանսական ազդեցության միջոցներ, նոր վարկեր տալու համար՝ պայման դնելով ժամանակին մարել ու նախկին փոխառությունները՝ խիստ պահպանելով վարկային դիսցիպլինան, ինչպես և ոգտագործել գյուղատնտեսական բանկերի հաճախորդների անպարտաճանաչության դեմ պայքարելու միջոցները՝ պրոտեստի ուղարկելով ժամկետից անցած բոլոր մուրհակները, կանգ չառնելով նույնիսկ գյուղատնտեսական վարկի ընկերությունների պարտավորությունները պրոտեստի տալու առաջ՝ հայտնելով այդ մասին նախնական ամբողջ ցանցին:

Յեթե գյուղատնտեսական վարկի հիմնարկները, մասնավորապես գյուղատնտեսական վարկի ընկերությունները թույլ տան պրոտեստի յենթարկել իրենց պարտավորությունները, պրոտեստի յենթարկված հիմնարկներին տրվելիք վարկերը կփակվեն և միաժամանակ միջոցներ ձեռք կառնվեն այդ հիմնարկների գործունեության շրջանում յեղած պլանային ձեռնարկումների վարկավորումը անցկացնելու վարկային այլ հիմնարկների միջոցով կամ այլ յեղանակով՝ գյուղատնտեսական վարկի սխտեմի վերադառողակի հայեցողությամբ:

7. Առաջարկել գյուղատնտեսական վարկի ստորին ցանցին՝ չարամիտ կերպով իրենց պատքերը չվճարողների վերաբերմամբ կիրառել ավելի խիստ միջոցներ՝ մինչև իսկ միանգամայն դադարեցնել նրանց տնտեսություններին վարկեր տալը և առանձին դեպքերում նույնիսկ հեռացնել ընկերությունից:

8. Ժամկետից առաջ գանձել վարկ ստացողներից այն փոխառությունները, վորոնք չեն ոգտագործվել իրենց նպատակին:

9. Գյուղատնտեսական վարկի ընկերությունների խորհուրդների վորոշումներով ժամկետից առաջ գանձել այն փոխառությունները, վորոնք գյուղատնտեսական ընկերությունների վարչությունների կողմից անիրավացի կերպով տրվել են ունեվոր և կուլակ տարրերին՝ հակառակ գյուղատնտեսական վարկային սխտեմի ղեկավար որդանների դիրեկտիվներին:

10. Կտրուկ կերպով արգելել Գյուղատնտեսական վարկային ընկերություններին՝ կրճատել վարկավորման ժամկետները ըստ առանձին նպատակային հատկացումների՝ այդ նպատակների համար տրված փոխառությունների ժամկետների դիմաց, ինչպես և ուժեղացնել ու զարգացնել հասարակական վերահսկողության ձևերը՝ փոխառությունները իրենց նպատակին ծառայեցնելու համար, Գյուղվարկային ընկերությունների լիազոր անդամների և գյուղական ակտիվի ոգնություններ:

Բ. Ավանգներ հավաքելու գործում

1. Անցկացնել բացատրական կամպանիա գյուղական վայրերում գյուղական լայն ակտիվի մասնակցությամբ՝ այն մասին, վոր անհրաժեշտ է գյուղատնտեսական վարկային ընկերություններում վորպես ավանդ հավաքել գյուղական ազգաբնակչության և կազմակերպությունների բոլոր խնայողությունները և ժամանակավորապես ազատ միջոցները, հայտարարելով, վոր կառավարությունը լիովին ապահովում է ավանդների ամբողջությունը՝ Կենտրոնական գյուղբանկին կից յերաշխավորված ֆոնդի հաշվին:

2. Յուրաքանչյուր գյուղվարկային ընկերության համար՝ նայած նրա աշխատանքի դրությունը և նրա շրջանի պայմաններին՝ տալ կոնտրոլային հաստատուն թվեր, մատնանշելով նրանց իրագործման որացույցային ժամկետները, այնպես վոր ավանդների կայուն մնացորդները (стабильные остатки вклада) այս տարվա վերջում ավելանան յերկու անգամից վոչ պակաս:

3. Գյուղ վարկային ընկերությունները նոր վարկերը բաց անելիս պետք է հաշվի առնեն ավանդների հավաքման վերաբերյալ հիշյալ կոնտրոլային թվերի իրագործումը:

4. Պարտավորեցնել բոլոր կոնտեսություններին, գյուղատնտեսական և տնայնագործ-արհեստային կոոպերատիվներին, և գյուղատնտեսական տնտեսությունների հասարակ միություններին՝ իրենց բոլոր ազատ միջոցները վորպես ավանդ պահ տալ գյուղվարկային ընկերություններին այն դեպքում, յերբ այդ միջոցները պահ չեն տրվել խնայողական գանձարկղներին կամ չեն հատկացվել պետական փոխառություններին:

5. Գյուղատնտեսական բանկերը նախնական ամբողջ ցանցի վրա պետք է տարածեն ապահովագրական վարկեր բաց անելու պրակտիկան՝ ավանդների մասսայական պահանջի դեպքում:

6. Գյուղվարկային բոլոր ընկերություններում ընդունել նպատակային ավանդներ և ավանդներ գյուղատնտեսական մեքենաների, լավորակ սերմացուի, անասունների և արտադրության այլ միջոցների գնման համար, թողնելով պահ տված գյուղվարկային ընկերություններում մի մասն այն փողերի, վոր ստանում են անդամները կոնտրակտացիայով և վաճառքի միջոցով իրենց հանձնած մթերքների փոխարեն, ապահովելով, վոր ընկերության անդամները ժամանակին ստանան իրենց անհրաժեշտ արտադրության միջոցները, իսկ ընկերության կարիքավոր անդամներին՝ բացի դրանից տրվել անհրաժեշտ վարկ՝ լրացնելու նրանց հավաքած սեփական միջոցները:

7. Կենտրոնացնել գլխավորապես գյուղվարկային ընկերություններում ազգաբնակչության հետ գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր տեսակների և միջնորդ կազմակերպությունների ունեցած զրամական հաշիվների կատարումը, վորպեսզի հաշիվների կատարման մոմենտը ոգտագործվի գյուղվարկային ընկերությունների կողմից ազգաբնակչությանից ավանդներ ստանալու համար:

8. Առաջարկել Անդրգյուղբանկին և հանրապետական գյուղբանկերին պարտավորեցնել նրանց կողմից վարկավորվող կազմակերպություններին և հիմնարկներին, իրենց ազատ միջոցները պահ տալ գյուղբանկերի ընթացիկ հաշիվներում:

Գ. Փայավճարների յեվ հատուկ մոլծուլմների գանձումը ավելացնելու գործում:

1. Կազմակերպել գյուղատնտեսական վարկային ընկերությունների անդամների հատուկ ընդհանուր ժողովներ փայավճարները ավելացնելու (վոչ պակաս 15 բուրլուց, անդամակցական վճարը 1 բուրլուց վոչ քիչ), ունեվորների և միջակ խավերի անդամավճարները ամբողջովին գանձելու, նույնպես և հատուկ զրամագլուխների համար առանձին մոլծուլմներ գրավելու նպատակով՝ ընկերություն կանոնադրություն և նրա գործունեություն ծավալին համապատասխանող չափով:

2. Բախնաում անցյալ տարիներից մնացած վեսաներ ունեցող վարկային ընկերությունների անդամների նույնատեսակ ընդհանուր ժողովներում կատարել, համաձայն կանոնադրության, վնասների բաշխում ընկերության բոլոր անդամների միջև, նախատեսելով ընդ սմին հատուկ արտոնություններ ընկերության անդամ չքավոր տնտեսությունների համար՝ վնասները ծածկելու նպատակով սահմանված մոլծուլմներ կատարելու ժամանակ:

3. Խրախոսման և գործունեություն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով այն վարկային ընկերությունները, վորոնք հաջողությամբ են գանձում փայավճարները, պարտավորեցնել Անդրֆինոկոմատը և Անդրգյուղբանկը տարեկան յերկու անգամ, այն և յուրաքանչյուր տարվա տպրիլի 1-ին և հոկտեմբերի 1-ին, այդպիսի վարկ ընկերության բախնայի փայավճարների կես տարվա ընթացքում ավելացած ընդհանուր գումարի չափով պետական բյուջեի հատուկ նպատակային միջոցներից տրված պարտքերից փոխանցում կատարել, այդ չափի գումարով ավելացնելով վարկային ընկերության հիմնական զրամագլխի յերկար ժամանակյա վարկը:

4. Գյուղատնտեսական վարկային ընկերության միջոցով ազգաբնակչությունից գանձված հատուկ մոլծուլմների մի մասը գործադրել գյուղատնտեսական միջերջների վերաշակման համար անհրաժեշտ կոոպերատիվ ձեռնարկություններ կառուցելու նպատակով, ինդուստրիացման ձեռնարկների վարկավորումը պայմանավորելով ազգաբնակչությունից նույն նպատակով ստացած վորոշակի գումարներով:

IV. Ժամկետանցների գանձումը, նույնպես և ավանդների ներգրավման, փայավճարների ու հատուկ կապիտալների ուժեղացման հարվածային կամպանիան ավարտել 1929 թ. ապրիլի 1-ին:

Ապագայում գյուղատնտեսական վարկային սիստեմի մեջ աշխատանքը կազմակերպել այնպես, վորպես զի ամբողջ վարկավորման գործը կանոնավոր հողի վրա դնելու, վարկավորվողներին ներկայացրած ճշտապահությունը անշեղ պահանջող և ազգաբնակչությունից գանձվելիք գումարների համար անհրաժեշտ միջոցների անշեղ ու պարզորոշ կիրառմամբ վերջնականապես վերացվի ժամկետանցների գանձման ու փայավճարների և ավանդների ներգրավման աշխատանքը հարվածային կամպանիայի ձեվով անցկացնելու անհրաժեշտությունը:

V հանձնարարել ԱՍՖՆՀ մեջ մտնող հանրապետություններին կառավարություններին սույն վորոշման հիման վրա մշակել մի շարք կոնկրետ գործնական միջոցներ ազգաբնակչությունից զրամական միջոցներ գյուղատնտեսական վարկային սիստեմի մեջ ներգրավելու համար:

VI. Հանձնարարել Անդրֆինոկոմատին Անդրառևտրի ժողկոմատի և Անդրգյուղբանկի հետ միասին մշակել միջոցներ, վորոնք կանոնավոր հողի վրա կարողանային դնել գյուղատնտեսական վարկային ընկերությունների և միջերող կազմակերպությունների փոխ-հարաբերությունները այդ ընկերությունների կողմից վարկավորվողներից ժամկետանց պարտքերը ստացած միջերջների հաշիվին զրավելու համար:

VII. Հաստատել, վոր յուրաքանչյուր գյուղվարկային հիմնարկության և յուրաքանչյուր գյուղ վարկային ընկերության իբրև հաջող աշխատանքի չափանիշ կը ճանաչվի ընթացիկ տարվա ընթացքում ազգաբնակչության միջոցները վարկային ընկերությունների մեջ ներգրավելու և ժամկետանցները լիկվիդացիայի յենթարկելու համար կատարված աշխատանքի գործնական հետևանքները:

ԱՍՖՆՀ ժողովրդ. կոմիսար. խորհրդի նախագահի փոխանորդ՝ Գ. Գուսեյնով.

Գործերի կառավարիչ՝ Ն. Բախսաձե.

7 փետրվարի 1929 թ.

Քիֆլիս.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գյուղատնտեսական բանկերին յետ վարկային ընկերություններին հաղորդված կամ պահանջները՝ ժամկետացնելու՝ ժամկետացնելու լիկվիդացիայի յենթադրվելու յետ գյուղատնտեսական ազգաբնակչության ազատ միջոցները սխեմանում ներգրավելու նպատակով:

1. Անդրժողովուրդին 1929 թ. փետրվարի 7-ի վորոշման մեջ նշված բոլոր միջոցները ճշտորեն կենսագործելու նպատակով Հանրապետական Գյուղատնտեսական կերին կից կազմակերպվում է կենտրոնական Հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնելու յեն մի ներկայացուցիչ Բանկից (Վարչ. Նախագահ) և մեկական պատասխանատու ներկայացուցիչներ Գյուղկոոպի կերտրոնից, Ֆինանսական կոոպերատիվից և Արդյունահանության կազմը կարելի յեն լրացնել այլ գերատեսչությունների, հաստատությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներով, վորոնք ղեկավար որդանների ցուցումներով ակտիվ աշխատանք կտանեն:

Բանկի Վարչության Նախագահը Հանձնաժողովի նիստեր է գումարում վոչ պակաս քան շաբաթը մի անգամ:

2. Կենտ. Հանձնաժողովին մասնակցող հաստատությունները աշխատակիցների հատուկ կադր են առանձնացնում, վորոնց և տեղերն են գործողում կամպանիան անցկացնելու աշխատանքները ղեկավարելու համար: Բանկի բոլոր տեսուչները և գյուղ կոոպերացիայի հրահանգիչները, այլև մյուս հաստատությունների առանձնացրած աշխատակիցները կամպանիայի ընթացքում ազատվում են իրենց անմիջական աշխատանքներից:

3. Կամպանիան անցկացնելու համար մոբիլիզացիայի յենթարկված յուրաքանչյուր աշխատակցին կցվում է վորոշ շրջան, ըստ վորում, նա պատասխանատու ղեկավար է հանդիսանում համապատասխան բոլոր կազմակերպությունների կամ կամպանիան անցկացնողների ամբողջ աշխատանքի համար:

4. Կենտ. Հանձնաժողովը տեղական մամուլում, ըստ հնարավորության ամենայն ուղիով, լուսաբանում է կամպանիային վերաբերող հարցերը (ժամկետացնելու լիկվիդացիան, փայտավաճարների և հատուկ մուծումների գանձումը, ավանդների ներգրավումը), մատնանշված թեմաների վերաբերյալ հողվածները բաժանելով կամպանիայի հետ կապված բոլոր հաստատությունների միջև, այլև զետեղելով տեղական իշխանությունների և ղեկավար որդանների հետ ունեցած հատուկ զրույցներն ու մոբիլիզացիայի յենթարկելով գյուղթղթակիցների կադրերը՝ հայտարարված կամպանիայի աշխատանքներին համար:

Կենտ. Հանձնաժողովը տեղական մամուլում ժամկետացնելու լիկվիդացիայի վերաբերյալ վարկ. ընկերությունների կոչ է կազմակերպում, ըստ վորում կոչի յենթարկված Վարկ. ընկերությունները վորոշ ժամանակամիջոցում պիտի ավարտեն ժամկետաց գումարների լիկվիդացիան, հետևելով արդեն իսկ կոչի յենթարկված Վարկ. ընկերության որինակին:

5. Կենտ. Հանձնաժողովը, ղեկավար Գերագույն մարմինների գծով, առանձին դիմումով, կամպանիային աջակցելու նպատակով բոլոր ղեկավար որդանների կողմից հատուկ աշխատակիցներ տրամադրելու մասին, ապահովում է կամպանիայի գործնական ուժանդակություն ցույց տալը և տեղական հասարակական բոլոր կազմակերպությունների ոգնությունը:

6. Կամպանիայի նպատակը պարզաբանելու նպատակով Կենտ. Հանձնաժողովը տեղական լեզուներով գյուղացիությունն ու գյուղի ակտիվին ուղղած հատուկ կոչներ է տպագրում: Այս կոչերը կախվելու յեն Գյուղխորհուրդների շենքերում և ամեն մի կոոպերատիվի աչքի ընկնող տեղում:

7. Կամպանիան անցկացնելու առթիվ Վարկ. ընկերություններին ուղարկվում են մանրամասն հրահանգներ, ցույց տալով յուրաքանչյուր միջոցը իրագործելու համար որացուցային ժամկետներ և Վարկ. ընկերությունը տալով գործնական ցուցումներ՝ ժամկետացները լիկվիդացիայի յենթարկելու, փայտավաճարները գանձելու և հատուկ մուծումներ ու ավանդներ ներգրավելու ասպարիզում:

8. Վարկ. ընկերություններին ուղղված հրահանգներում վորպես հիմք պիտի նշել հետևյալը.—

1. ԺԱՄԿԵՏԱՑՆԵԼՈՒ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՄ

ա) Վարկային ընկերություն Վարչությունը հիշված հրահանգը ստանալու օրից, մի շաբաթվա ըթացքում, պարտավոր է կազմել փոխառուների բոլոր տեսակի ժամկետաց գումարների և ավանդների ցուցակները և բաժանել փոխառուներին 4 կարգի. առաջին՝ ժամկետաց գումարներ, յվոր տրված են կրճատված ժամկետներով, հակառակ փոխառվության ժամկետների, ստացված Բանկից այս իսկ նպատակով. յերկրորդ՝ չքավոր փոխառուների ժամկետաց գումարների, վորպիսի փոխառվությունները ստացել են նորմալ ժամկետով և ոգտագործել են ըստ նպատակի, բայց տարերային աղետի կամ հիվանդության և այլ պատճառներով նախապես փոխառվությունը մարելու հնարավորություն չեն ունեցել և այժմ ել չունեն գույք կամ մթերք, վորոնց վրա հնարավոր լինի արգելանք դնել. յերրորդ՝ ժամկետաց գումարների այնպիսի փոխառուների, վորոնք վորոշ տնտեսական դժվարություն կրելով կարող եյին մարել իրենց պարտքերը, սակայն անփութություն կամ պատահական պատճառներով թույլ են տվել ժամկետացներ. յորրորդ՝ ժամկետաց գումարների այնպիսի փոխառուների, վորոնք նախապես հնարավորություն ունեյին մարել փոխառվությունը, սակայն զանազան պատճառաբանություններով խուսափել են վճարելուց, վորով և նենգամտությամբ խախտել են վարկային դիսցիպլինան:

բ) Առաջին կարգի ժամկետանց փոխառությունները (սահմանված ժամկետներից կրճատված ժամկետներով տրված փոխառություններ) Վարչութիւնը անհապաղ ձեռնարկում է նոր ժամկետներով, համաձայն Բանկի առաջադրված ժամկետների և պայմանների, ի հաշիվ վորի տրվել էյին փոխառությունները:

գ) Յերրորդ կարգի ճիշտ ստացված և ոգտագործված փոխառությունների վերաբերմամբ չքաղության կողմից հարգելի պատճառով ժամկետանց յեղած (տարերային աղետ, հիվանդութիւն, անասունի կոտորած) Վարչութիւնն իր ֆինանսական հնարավորութիւնները սահմաններում հետաձգում է:

դ) Յերրորդ և չորրորդ կարգերի ժամկետանց գումարներ ունեցող փոխառուների ցուցակները կազմվում են ըստ գյուղերի, ցույց տալով անունն ու ազգանունը և ժամկետանցի գումարները, ուղարկվում են գյուղ-խորհուրդներին, պահանջելով կախել աչքի ընկնող տեղում, ու հաղորդելով ցուցակների մեջ հիշատակված փոխառուներին այն մասին, վոր մի շաբաթվա ընթացքում փոխառութիւնը չվճարելու դեպքում, դատական կատարածուի միջոցով, նրանց գույքը կվճառվի և գանձում կկատարվի:

յե) Վարկ. ընկերութիւնն Վարչութիւն, Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները և մոբիլիզացիայի յենթարկված ընկերները շրջում են բոլոր գյուղերը և տեղական ակտիվի մասնակցութիւնով հարվածային կարգով բացատրական կամպանիա յեն տանում փոխառութիւնները լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտութիւն մասին:

զ) Մի շաբաթվա ընթացքում յերրորդ և չորրորդ կարգի փոխառուներից չվճարված փոխառութիւնները գանձելու համար դատական հրամաններ են պատրաստվում ու հանձնվում ժողդատարանին ռեգիստրացիայի յենթարկելու և ստորագրելու:

է) Ժողդատարանը, համաձայն Անդրկենտկոմի Նախագահութիւն 1928 թ. նոյեմբերի 15-ի վորոշման, պարտավոր է պարտագրերը ներկայացնելուց հետո, 2 օրվա ընթացքում, տալ դատական հրամաններ: Այս ժամկետներից ուշ դատական հրամաններ ստանալու դեպքում Վարկ. ընկերութիւնն այդ մասին անմիջապէս հեռագրով հայտնում է Գյուղբանկին:

ը) Ստացված դատական հրամանները հանձնվում են դատ. կատարածուին, վորը համաձայն Անդրկենտկոմի նշված վորոշման, պարտավոր է ժամկետանց գումարները վճարելու ծանուցագրերը, դատական հրամանները ստանալուց հետո, 2 օրվա ընթացքում, հանձնել պարտապաններին:

թ) Դատական կատարածուի ծանուցագրի մեջ ժամկետանց փոխառութիւնը հօժարակամ մարելու համար յերրորդ կարգի փոխառուներին ժամանակ է տրվում, ծանուցագիրը ստանալուց վոչ ավելի քան 10 օր, իսկ օրրորդ կարգի փոխառուներին՝ 5 օր:

ձ) Դատական կատարածուն գույքը աճուրդով վաճառելու համար հայտարարում է ժամկետանց փոխառութիւնը հօժարակամ մարելու համար տրված ժամանակն անցնելու հետեյալ օրը և արգելանք դնում գույքի վրա:

ժ) Առաջին հերթին և մի շաբաթից վոչ ուշ չորրորդ կարգի ժամկետանց գումարների փոխառուների, վորոնք նախապէս հնարավորութիւն ունեյին մարելու փոխառութիւնը, սակայն զանազան պատճառաբանութիւններով խուսափել են վճարելուց, վորով և նենգամտորեն խախտել են վարկային դիսցիպլինան—գույքն աճուրդի յե հանվում:

ժբ) Յերրորդ և չորրորդ կարգի փոխառուների գույքերի վաճառքը պիտի սկսվի և վերջանա վոչ ուշ քան ս. թ. նոյեմբերի 20-ը, վորպեսզի գեկտեմբերի 1-ի հաշվեկշռում ժամկետանց փոխառութիւններ ցույց չըտրվեն:

ժգ) Բացի ժամկետանց գումարների գանձումների ժամանակամիջոցի, այլև փոխառութիւնների ժամկետանց մասնակի վճարումների համար բարդվող տոկոսներից և տույժից՝ փոխառուներից գանձվում են դատական ծախքերը, հաշվելով դրա վրա նաև գույքվարկի սխտեմի հաշվով պահվող դատական կատարածուների ծախքերի համապատասխան մասը:

ժդ) Անկախ չարամիտ չվճարող փոխառուների խմբակից (չորրորդ կարգի) արվող գանձումներից, Վարկ. ընկերութիւնները ջոկում են փոխառութիւնները չվճարող 3—5 հոգի չարամտորեն չվճարող անդամներ, ընկերութիւնն ընդհանուր ժողովում նրանց վերաբերմամբ խիստ միջոցների դիմելու համար, ինչպէս օրինակ՝ բոլոր տեսակի վարկերը 1-2-3 տարով ամբողջովին փակելով, իսկ առանձին դեպքերում, վարկային դիսցիպլինան չարամտորեն դիտավորյալ խախտելու դեպքում, անդամութիւնից հեռացնելով:

11. ԻՐԵՆՑ ԵՊԻՏԵԿԻՆ ԶՈՂՏԵԳՈՐԾՎԵԾ ՎԵՐԿԵՐԻ ՄԻՆԶՈՒՄԿԵՏԵԿԻՆ ԳՆԶՄԸՆ ՄԵՍԻՆ.

ա. Միջակ տնտեսութիւնների կողմից ստացված վարկերը վոչ նպատակին ոգտագործելու դեպքեր հայտնաբերելիս, Վարկային ընկերութիւնն Վարչութիւնը հրավիրում է գանցառու փոխառուին և բացատրութիւնն է պահանջում՝ թե ինչու նա ստացած վարկը իր անմիջական արտադրական նպատակի համար չի ոգտագործել: Տրված բացատրութիւնները անբավականաբար գտնելու դեպքում, Վարչութիւնը վորոշում է կայացնում իր նպատակին չոգտագործված փոխառութիւնը ժամկետից առաջ յետ գանձելու մասին: Տալիս է փոխառուին մի շաբաթվա ընթացքում ժամանակամիջոց այդ պահանջը հօժարակամ կատարելու համար, վորի մասին հայտարարվում է փոխառուին, նրա ստորագրութիւնով, վոր յեթե նա վորոշված ժամկետին չվերադարձնի փոխառութիւնը՝ այդպիսին կընագանձվի դատական կարգով:

բ) Վարկը իր նպատակին չոգտագործող փոխառուին պարտքը մինչ ժամկետը հօժարակամ հատուցման համար տրված ժամանակի միջոցը լրանալիս, Վարկ. ընկերութիւնն Վարչութիւնը ժողդատարանում հայց է հարուցում իր նպատակին չոգտագործված վարկը փոխառուից բռնագանձելու մասին:

գ) Ժող. դատարանները մինչ ժամկետային բռնագանձման հայցերը հերթից դուրս ի կատար ածելու համար ընդունում են (օգոստ. նոյեմբ.) կամպանիայի ժամանակ և բավարարվում են մեկ շաբաթվա ընթացքում

կատարողական թերթեր տալով, վորի հիման վրա Վարկային ընկերությունը կատարածուի միջոցով փոխառուի գույքից բռնագանձում և նրա պարտքը:

III. ԱՆՆԱԿԱՆ ՍԵՎ ԿՈՒՆԿ ՏԵՐԹԵՐԻՆ ՍԽԱՄԱՐԻ ՏՐԱՎԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՒԿՈՒԹՅԱՆ ՊԵՐՍՈՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԱՍԻՆ

ա) Ներկա հրահանգը ստանալուն պես անհապաղ հրավիրվում է Վարչության, խորհրդի և Վերստ. Հանձնաժողովի միացյալ նիստ, վորտեղ քննվում է Վարկային ընկ. բոլոր փոխառուների ցուցակը, ըստ վորում հատուկ ցուցակով խառնաձայնում են բոլոր այն վարկերը, վոր տրվել են ունեվոր և կուլակ տնտեսություններին: Այդ ցուցակում ցույց է տրվում փոխառուի անունն ու ազգանունը, վարկի ստացման որը, վարկի քանակը, նպատակը և ժամկետը: Ունեոր և կուլակ տնտեսությունների շարքը դասելու համար հիմք է ընդունվում գյուղհարկի անհատական դրույքը, ինչպես նաև խորհուրդների ընտրության ժամանակ ձայնագրված ընտրության անաշխատ յեկամուտները: Ցուցակում նշվում է անհատական հարկադրման քանակը, կամ ընտր. կոմիտեի կողմից խորհուրդներում ձայնագրված ընտրության մասին հանած վորոշման որը:

բ) Գյուղավարկային ընկերության խորհուրդը վորոշում է կայացնում Վարչության կողմից սխալմամբ, հակառակ ղեկավար մարմինների դիրքերի, կուլակ և ունեվոր տարրերին վարկեր տրվելու մասին և առաջարկում է Վարչությանն անմիջապես յետ գանձել, համաձայն ցուցակի, բորոր ունեվոր և կուլակ տնտեսություններին տրված վարկերը:

գ) Վարչությունը՝ յերեք որվա ընթացքում բոլոր ունեոր և կուլակ տարրերին, վերջիններից ստորագրություն առնելով, պահանջ է ներկայացնում անմիջապես մարելու իրենց պարտքը, համաձայն խորհրդի վորոշման, և հայտնում է, վոր մի շաբաթվա ընթացքում հոժարակամ չմուծելու դեպքում, պարտքը բռնագանձվելու յե դատական կարգով, դատական ծախսերի հետ միասին:

դ) Պարտքի հոժարակամ հատուցման համար սահմանված ժամկետը լրանալիս Վարկ. ընկերությունը համաձայն խորհրդի վորոշման ժողդատարանին հայց է ներկայացնում բոլոր այն փոխառվածությունների բռնագանձման համար, վորոնք մինչև այդ դեռ չեն մուծվել ունեվոր և կուլակ տարրերի կողմից:

յե) Ժողդատարանը, հերթից դուրս, մի շաբաթվա ընթացքում, քննում է Վարկ. ընկերության հայցը և տալիս կատարողական թերթեր՝ ունեվոր և կուլակ տնտեսությունների գույքից բռնագանձելու նրանց վրա հաշված բոլոր փոխառվածությունները:

զ) Կատարողական թերթերով կատարածուների միջոցով շտապ կարգով գանձվում են պարտքի ամբողջ գումարը, բոլոր դատական ծախսերը, ներառյալ կատարածուների պահպանման ծախքերի համապատասխան մասը:

9. Արդիւթողումը, համաձայն Անդրօկի փետրվարի 7-ի 1929 թվի վորոշման 8 կետի, իր յենթակա որդաններին կտրուկ հրահանգներ և տալիս

հարվածային կարգով և հերթից դուրս, քննել ժամկետանց, մինչժամկետային, ինչպես նաև ունեոր և կուլակներին տրված փոխառվածությունները բռնագանձելու գործերը:

10. Բռնագանձման գործերի դատական որդաններում ուշացնելու ամեն մի դեպքի մասին Վարկ. Վարչությունը հեռագրով հայտնում է անհրաժեշտ միջոցներ Անդրօկի միջամտության միջամտության միջոցով և անհրաժեշտ առկա համար:

11. Վարկ. Վարչությունը անմիջապես համաձայնության է գալիս բոլոր մասնագիտ. կոոպերատիվների և մթերում կատարող կազմակերպությունների տեղական ընկերությունների հետ կոոպերատիվային կարգով ստացած մթերքների կամ վաճառահանման գործարքների հաշվհարդարը կատարելիս, պահել փոխառուների համաձայնության միջոցով Վարկ. Վարչությանն ունեցած ժամկետանց պարտքերից համաձայն նրանց ցուցակների, ըստ վորում կազմակերպությունները իրենց քանձած գումարները հանձնում են Վարկային ընկերությանն անմիջապես, համեմայն դեպս վոչ ուշ քան գանձումից 7 որ հետո:

12. Ավանդների ներգրավման գործում, Վարկային ընկերություններին ուղղված հրահանգներում, պետք է նախատեսել հետևյալը.—

ա) Վարչության, խորհրդի և Վերստ. Հանձնաժողովի միացյալ հատուկ նիստում, հրահանգները ստացվելուց հետո, մի շաբաթվա ընթացքում, ըսվում է Վարչության ղեկուցումը՝ ավանդների ներգրավման ասպարիզում տարած աշխատանքի մասին:

բ) Զեկուցման մեջ ցույց է տրվում անհատական ավանդատերերի քանակը և նրանց ավանդների միջին գումարը, կոոպերատիվությունների, մասնագիտ. կոոպերատիվների և գյուղացիական տնտեսությունների պարզ միավորումների, վորպես ավանդատերերի՝ քանակը, և նրանց ավանդների ընդհանուր գումարը, տեղական մյուս հաստատությունների քանակը, վորոնք իրանց դրամը, իրեն ավանդ պահում են Վարկային ընկերություններում, և այդ ավանդների գումարը:

գ) Ավանդատերերի վերոհիշյալ խմբակների յուրաքանչյուրի մասին միացյալ նիստը, նրանց ավանդների կայուն մնացորդի մինչև ընթացիկ տարվա վերջն ավելացնելու մասին, կոոպերատիվ հնարավորություններ և մշակում և Վարչությանը կտրուկ հրահանգ է տալիս «բ» կետում հիշված խմբակների ամեն մեկից, առանձնապես անհատ տնտեսություններից, ավանդներ ներգրավելու աշխատանքների մասին, առ 1-ն հոկտեմբերի, առ 1-ն դեկտեմբերի և առ 1-ն հունվարի, այն հաշվով, վոր տարվա վերջին (առ 1-ն հունվ.) Վարկային ընկերությունների հաշվիչում ավանդների ընդհանուր գումարը կրկնակի աճի:

դ) Գյուղավարկային ընկերության Վարչությունը ակտիվ աշխատակիցներից մի քանիսին առանձնացնում է պարզաբանող կամպանիա տանելու համար բոլոր գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտես. կոոպերատիվների և պարզ միավորումների, ինչպես նաև շրջանում գործող վար-

չական և տնտեսական կազմակերպությունների խնայողություններն ու ժամանակավոր ազատ միջոցները, իբրև ավանդ, Գյուղվարկային ընկերությունները պետք է անհրաժեշտության մասին: Առանձնացրած աշխատակիցները շրջում են իրենց կցված բոլոր գյուղերը և գյուղի ակտիվի լայն մասնակցությամբ, գումարում գյուղացիների ժողովներ, ուր և քննվում են ավանդների վարկային ընկերությունը ներգրավելու հարցերը:

յ) Այս ժողովներում նախ և առաջ պետք է հայտարարել ամբողջ բնակչությանը, վոր կառավարությունը կենտրոնացված է հիմնել և անանդները ամբողջությունը ապահովող հատուկ յերաշխավորական ֆոնդ և վարկային ընկերություն ավանդատերերը ամեն դեպքում ապահովված են, վոր իրանց գրամը չի կորչի և առաջին իսկ պահանջին վերադարձվելու յե ամբողջ գումարը իր տոկոսներով: Գյուղականներին բացված ավանդների ապահովագրական վարկերը յերաշխավորում են իրենց հերթին ավանդների վերադարձը անկախ վարկային ընկ. դրամարկային դրությունից: Ավանդների գաղտնիքը ապահովվում է որենքով և վոչ մի հարկային որգան, վոչ վոք, բացի ավանդատիրոջից և վարկային ընկերության վարչությունից չեն կարող տեղեկանալ ավանդի գոյություն մասին:

Ավանդների վրա արգելանքի հայցեր կարելի յե հարուցել միմիայն քրեյական գործերի պատճառով:

Վարչ. անդամներն ու աշխատակիցները ավանդների բացարձակ գաղտնապահությունը չպահելու դեպքում քրեյական պատասխանատվության յեն յենթարկվում:

Ավանդների գոյությունը վոչ մի կերպ չի կարող աղդել ավանդատիրոջ վոչ քաղաքական և վոչ ել ընդհանուր քաղաքացիական իրավունքների վրա:

զ) Պարզաբանող կամպանիայի ընթացքում բնակչությանը նաև պիտի պարզաբանել, վոր գյուղականը նոր վարկեր բանալիս, նկատի յե ունենալու վարկային ընկ. մեջ ներգրավված ավանդներին զարգացումը, հետևապես վարկային ընկերության կողմից սպասարկող շրջանին տրվելիք փոխառությունների ոգնություն համար նկատի յե առնվելու այն հանգամանքը, թե ինչ չափով ազգաբնակչությունն ու տեղական կոոպ. և մյուս կազմակերպությունները կարողացել են իրենց խնայողությունները ու ժամանակավոր ազատ միջոցները իբրև ավանդ կենտրոնացնել վարկային ընկերությունում:

ե) Բնակչության նույնպես պետք է հայտարարել, վոր վարկային ընկերություններում բացվում է մի նոր գործարքի ձև, այն է՝ նպատակային կանխավճարների և ավանդների հաշիվ, վորոնցով վարկային ընկ. յերաշխավորելու յե առաջին հերթին գյուղամեքենաների, սերմացվի, հանքային պարարտանյութերի, արջասպի և այլ արտադրական միջոցների ստացումը միայն այն գյուղացիական տնտեսությունների և իրենց միավորումների համար, վորոնք այդ նպատակով ավանդներ և կանխավճարներ են մուծել, ըստ վորում կարիքավոր տնտեսություններին իրենց համար անհրաժեշտ համարված արտադրական միջոցներ ձեռք բերելու նպատակով տրվելու յե լրացուցիչ վարկ:

ը) Վարկային ընկ. վարչությունը՝ բոլոր մասնագիտական կոոպերատիվների վարչությունների և մթերող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին մշակում է կոնտրակտացիայի յեվ մթերումների գործարքների հաշվահարգարները Գյուղվարկային ընկ. մոտ կենտրոնարնելու կարգը, վորով վարկային ընկ. ի վիճակի կլինի ոգտագործել հաշվահարգարի մոմենտը հոգուտ ավանդների ներգրավման (համաձայն ԱնդրԺԿԽ ս. թ. փետրվարի 7-ի վորոշման 7 կետի գ. լիտ. յեվ III մասի): Մասնագիտ-կոոպերատիվների յեվ մթերող կազմակերպությունների հետ համաձայնություն կայացնելիս, պիտի նախատեսել այնպիսի կարգ, վորի հիման վրա նրանց դրամարկը փոխանցվում է վարկային ընկերություն յեվ վերջինս պարտավորվում է նրանց որդերներով յեվ նրանց հաշվին բնակչությանը վճարել կոնտրակտացիայից կամ վաճառահանման գործարքներից նրան հասանելի գումարները: Համաձայնությունը վարկային ընկերության կատարած հաշվահարգարների համար պետք է սահմանի մինիմալ կոմիսսիա, վորպեսզի մասնագիտ-կոոպերատիվներին յեվ մթերող կազմակերպություններին ձեռնառու լինի իրենց հաշվահարգարի գործարքները հանձնել վարկերկրության, վորով յեվ իրենց մոտ կստացվի համապատասխան ծախսերի կրճատում՝ գանձապահի ոռճիկի յեվ այլնի համար:

13. Գյուղականը ավանդների կամպանիայի վերաբերմամբ մեխանիկորեն բաց են անում բոլոր վարկերկրություններին ավանդների յարաշխավորական վարկ, համաձայն կիրառվող կանոնների:

Անկախ դրանից, Գյուղականը ստուգման յենթարկելով իրենց բոլոր հաճախորդներին՝ տեսնելու թե նրանցից յուրաքանչյուրը ինչչափով է իր ազատ միջոցները պահում Գյուղականում, պարտավորեցնում է ամեն մի հաճախորդին (համաձայն վերոհիշյալ ԱնդրԺԿԽ վորոշման) իր միջոցները մշտապես պահել Գյուղականում, իր ընթացիկ հաշվում:


4. ԺԱՂՈՎՆԵՐԻ ՂԵՎՈՂԵՐՄԱՆ ՑԵՎ ՄԱՍՆԵՐԻՑԵՎՈՐ

Փոնդերի մուծումների մասին.

ա) Որացուցային վորոշ ժամկետներում, համաձայն տարեկան հաշվետու վերնարական ժողովների ցուցակի, իսկ յեթե այդպիսիները արգեն կայացել են, ապա ուրեմն յուրաքանչյուր ընկերություն վոչ ուշ քան սեպտեմբ. 25-ը պարտավոր է գումարել փայտատերերի հատուկ ընդհանուր ժողով: Այդ ժողովում վորոշում է փայերն ավելացնել մինչև 20 ուրբլի (փայավճարները ավելացնել համաձայն Անդժողկոմխորհի փետրվարի 7-ի 1929 թ. վորոշման համեմայն դեպս 15 ո. վոչ պակաս): Միաժամանակ վորոշվում է, վոր փայավճարների վճարման ժամկետների յետաձգումը մինչև նրա լրիվ մարումը վոչ մի կերպ չի կատարվում նաև ունեվոր տնտեսությունների նկատմամբ:

Միջակ տնտեսություններին, նայած նրանց տնտեսական դրության, փայավճարները հավասար մասերով լրիվ վճարելու համար, կարելի յե տալ 2—3 (սակայն 6-ից վոչ ավել) ամիս ժամանակ, այն հաշվով, վոր մինչև 1-ը փայավճարները միջակների կողմից լրիվ մուծված լինեն:

7114-17



Գյուղմիասնարկից ազատված չքավոր տնտեսությունների նկատմամբ կարելի չէ ժամկետ նշանակել մինչև 3 տարի, սակայն փայտավճարի առաջին մուծումի համար՝ չքավորների կոոպերացման ֆոնդից տրվում է նրանց անտուկոս վարկ՝ փայտավճարի լրիվ մուծման համար պակասած գումարի 25 տոկոսի չափով:

բ) բացի փայտավճարների ավելացման խնդրից, նույն ժողովում վորոշում է կայացվում հատուկ դրամագլուխների մուծումների մասին, ըստ կանոնադրության նախատեսված քանակի յեվ Վարկային ընկերության գործունեությունից հնարավորություն (առեկտրական յեվ արտադրական գործունեությունները): Հատուկ դրամագլուխների մուծումները չեն հետաձգվում ունեվոր տնտեսությունների համար: Միջակ տնտեսություններին մուծելու ժամանակը յերկարացվում է 2—3 ամսով, իսկ չքավորները մինչև 1 տարի պարբերական մուծումներով:

գ) յեթե ընկերության հաշվեկշռում անցյալ տարիներից վնասներ կան, նույն ժողովում վնասների ամբողջ գումարը բաժանվում է բոլոր անդամների միջև, սակայն վնասները ծածկելու պարտադիր մուծումների ժամանակը յերկարացվում է «բ» կետում հատուկ դրամագլուխների մուծումների համար նախատեսված կարգով:

դ) փայտաբերի ընդհանուր ժողովում անդամներին իրազեկ անել, վոր նոր որենքի համաձայն (ԱնդրԺԿԽ-ի փետրվորի 7-ի 1929 թ. վորոշման) Գյուղվարկային ընկերությունները տարեկան յերկու անգամ Գյուղրանկից ստանալու յեն ըստ հաշվեկշռի առ 1-ին ապրիլի յեվ 1-ն հոկտեմբերի նոր յերկարատեվ վարկ, իբրեվ հիմնական դրամագլուխ, իրենց փայտավճարների դրամագլխի կես տարվա ընթացքում աճած գումարի չափով:

Այդպիսով, մինչև 1-ը յեվ հոկտեմբ. 1-ը փայտավճարներ մուծող անդամները կուժեղացնեն կրկնակի չափով ընկերության միջոցները ու այդ դրամով կը ծավալվի անդամների վարկավորման հնարավորությունները:

յե) Այն դեպքերում, յերբ Վարկային ընկերության գործունեությունից սահմաններում ծրագրվում է գյուղատնտեսական միջոցների վերամշակող կոոպերատիվ ձեռնարկ (պանրագործարան, յուղագործարան, պահածոների գործարան, չորանոցներ յեվ այլն) ազգաբնակչության ու կոոպերատիվ կազմակերպություններին պետք է հայտնել, վոր նման ձեռնարկների կառուցումների համար Գյուղրանկը վարկեր կտա այն դեպքում միայն, յեթե այդ նըպատակի համար ազգաբնակչությունը իր միջոցների մի մասը, իբրեվ պայմանական ավանդ, տրամադրի Վարկային ընկերությանը:

15. Տեղերը գործուղված բոլոր աշխատակիցները (տեսուչները, հրահանգիչները յեվ այլն) պետք է շրջեն իրենց պատասխանատվության հանձնը՝ ված ընկերությունները, կապ հաստատեն տեղի ղեկավար որգանների հետ յեվ տեղերում աշխատողներին հրահանգներ տան կամպանիային աջակցելու գործում:

Նախքան գործուղվելը, տեղեր գնացող աշխատակիցները Գյուղրանկից ստանում են իրենց հանձնված շրջանները բնորոշող յեվ գյուղացիության

միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու վերաբերյալ նյութեր՝ հրահանգներ, որիյենտիր ստուգող թվեր: Տեղերը գործուղվող աշխատակիցները չեն կարող փոխարինվել ուրիշ աշխատակիցներով յեվ իրենք անձամբ պիտի ղեկավարեն, ուղղություն տան յեվ ստուգման յենթարկեն Վարկային ընկերություններին, յեվ տեղական որգաններին տրված հրահանգների կատարվելը: Տեղերը մեկնողները պետք է իրենց մոտ ունենան Անդրկովկասյան ժողկոմխորհի ս. թ. փետրվարի 7-ի վորոշումը յեվ Անդրյերկոմի փետրվարի 6-ի նամակի պատճենները, Վարկային ընկերություններին տված հրահանգները յեվ Կենտրոնական Հանձնաժողովի կողմից հրատարակած կոչերն ու դիմումները: Գործուղվողներն իրենց շաբաթական հաշվետվություններով պատասխանատու յեն հանձնաժողովի առաջ:

Միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու կամպանիայի հետ կապված գործուղման անհրաժեշտ ծախքերը թե Գյուղրանկի յեվ թե Անդրկովկոմխորհի փետրվարի 7-ի վորոշմամբ այդ կամպանիային մասնակցող հիմնարկների կողմից կարող են հոգացվել արտանախաշվային կարգով ընթացիկ տարում, պատշաճ ինստանցիաների հատատմամբ:

16. Ժամկետանցների գանձման համար դատական ժամանակավոր կատարածուների վարձումը կատարում է Արդժողկոմատը՝ Գյուղվարկային սխտեմի հաշվին, սակայն, նայած ժամկետների չափին, կատարածուները պետք է հրավիրել այն հաշվով, վոր յուրաքանչյուրին ամրացնի 1—3. ընկերություններ: Աշխատավարձ պետք է վճարել ըստ Արդժողկոմատի դրույքների:


Աշխատավարձը վճարում է ընկերություններից մեկը յեվ ապա ծախսերը վերջում բաժանվում են բոլոր այն ընկերությունների վրա, վորոնց համար կատարածուներն աշխատանք են տարել:

Դատական կատարածուների քանակի, ժամանակի, յեվ աշխատանքի շրջանի մասին գյուղրանկը հայտնում է Արդժողկոմատին, համաձայնեցնելով Վարկային ընկերությունների հետ:

ԱնդրՖինոզկոմի փոխանորդ Ա. Խումարյան
Անդրգյուղրանկի Նախագահ Կ. Զխենկելի
Անդրգյուղմիության Նախագահ Կ. Կակարան

7/II 1929 թ.
թիֆլիս





2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0044504

9488

